ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ ОБЛОСТЬ
МУНИЦИПАЛИТЕТ
С. МРГАСТАНА

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

N 6-62

«14» 05 2018թ.

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի վեցերորդ մասով, Ձեզ է ներկայացվում՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2018թվականի մայիսի 3-ի թիվ 1/3 արտահերթ նիստի որոշումները:

Առդիր՝9թերթ

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 3-Ի ԹԻՎ 1/3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ԹԻՎ 16 ՈՐՈՇՄԱՆ

## ՕՐԱԿԱՐԳ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

16.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի, ԹԻՎ 1/3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ՝ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ՂԱՐԻԲՅԱՆ/

17-Ն.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի, ԹԻՎ 6 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ, ԹԻՎ 56-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «2018ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

18-Ա. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2018ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ՝ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

19-Ա.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱ-ԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏՇԱՃ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ, ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՐՑԸ՝ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆ՝ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

20.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄՈ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ-ՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ-ՈՒՄ, «ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ» ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ՝ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

21.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ «ՄԱՅԻՍԻ 28-Ի» ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ՝ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

22.ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ՂԱՐԻԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

# ՈՐՈՇՈՒՄ

«3» մայիսի 2018թվական թիվ 16

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել՝Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2018թվականի մայիսի 3-ի, թիվ 1/3 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ | 5կողմ | 0դեմ | 0 ձեռնպահ |
|---|---|---|---|
| Հ. Եղիգարյան | | | |
| Թ. Զանգիրյան | | | |
| Հ. Ասատրյան | | | |
| Ա. Ասատրյան | | | |
| Ա. Հովակիմյան | | | |

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական մայիսի 3
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

# ՈՐՈՇՈՒՄ

«3» մայիսի 2018թվական թիվ 17-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի, ԹԻՎ 6 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ, ԹԻՎ 56-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «2018ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 18-ի, «2018թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 6 հերթական նիստի, թիվ 56-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

2.Պահուստային ֆոնդից պակասեցնել՝ 440.0 /չորս հարյուր քառասուն հազար/ դրամ:

3.04բաժին 02 խումբ 01 դաս 4111 հոդվածին ավելացնել 240.0 հազար դրամ:
08բաժին 02 խումբ 04 դաս 4239 հոդվածին ավելացնել 200.0 հազար դրամ:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| Ավագանու անդամներ | 5կողմ | 0դեմ | 0 ձեռնպահ |
|---|---|---|---|
| Հ. Եղիզարյան | | | |
| Թ. Զանգիրյան | | | |
| Հ. Ասատրյան | | | |
| Ա. Ասատրյան | | | |
| Ա. Հովակիմյան | | | |

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվականի մայիսի 3
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

# ՈՐՈՇՈՒՄ

«3» մայիսի 2018թվական թիվ 18-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2018ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ՝ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 38-ի առաջին մասի 1-ին կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հավանություն տալ՝Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավարի 2018թվականի առաջին եռամսյակի բյուջեի կատարման հաղորդմանը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 5կողմ Ողեմ 0 ձեռնպահ

Հ. Եղիգարյան
Թ. Զանգիրյան
Հ. Ասատրյան
Ա. Ասատրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական մայիսի 3
գ. Մրգաստան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2018ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի
ԹԻՎ 1/3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ԹԻՎ 18-Ա ՈՐՈՇՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԲՅՈՒՋԵԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Հարգելի ավագանու անդամներ և Մրգաստան համայնքի բնակիչներ, Ձեզ եմ ներկայացնում Արմավիրի մարզի Մրգաստան համայնքում 2018թվականի առաջին եռամսյակում բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումը, բյուջետային օրենսդրությամբ սահմանված ժամկետում կատարված աշխատանքների վերաբերյալ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ինձ ընձեռնված լիազորություններով.

Իմ կողմից ապահովվել է համայնքապետարանի աշխատակազմի անխափան աշխատանքը: Իմ հանձնարարությամբ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից կատարվել է հետևյալ աշխատանքները՝

Համայնքի ավագանու անդրանիկ նիստի նախապատրաստումը, արձանագրումը և նիստի ներկա ավագանու անդամների կողմից արձանագրության վավերացումը:

Ընդունվել է ավագանու նիստերի ժամանակացույցը, հաստատվել է տարեսկզբի ազատ մնացորդը, հաստատվել է նաև համայնքի սան. մաքրման սխեման և գույքագրման փաստաթղթերը:

Կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություն՝ համայնքի ղեկավարի, աշխատակազմի քարտուղարի և ավագանու անդամների մոտ:Ընդունելության եկած քաղաքացիների դիմումներին և բանավոր հարցադրումներին իմ և ավագանու անդամների, ինչպես նաև աշխատակազմի քարտուղարի կողմից տրվել է սպառիչ պատասխան՝սահմանված ժամկետներում:

Ղեկավարվելով «ՏԻՄ» Հ.Հ. օրենքի պահանջներով իմ կողմից իրականացվել է օրենքով սահման-ված ինչպես պարտադիր, այնպես էլ կամավոր լիազորություններ:

Հաշվետու ժամանակաշրջանում իմ իրավասության սահմաններում օրենքով սահմանված կարգով հրավիրվել և վարվել է ավագանու մեկ նիստ:

Աղբահանության գծով իրականացվել են աշխատանքներ:Ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքում աղբահանության իրականացման ծրագրի նախագիծը:Կնքվել և հաստատվել է պայմանագիր՝ Վաղարշապատի «ԲԿՎ»-ի հետ:

Համայնքում կատարվում է աղբահանություն, շաբաթական երեք օր:

Համայնքի սեփական եկամուտները տարվա կտրվածքով կազմում է՝ 7 504.0 /յոթ միլիոն հինգ հարյուր չորս հազար/ դրամ:Հաշվետու ժամանակաշրջանում նախատեսված՝ 687.0 /վեց հարյուր ութսունյոթ հազար/ դրամից, կատարվել է հավաքագրում՝ 332.2 /երեք հարյուր երեսուներկու հազար երկու հարյուր/ դրամ, կատարման տոկոսը կազմում է՝ 48.4:

Հաշվետու ժամանակաշրջանում իմ կողմից վերահսկվել է հարկերի և տուրքերի հավաքագրման աշխատանքները.

Հողի հարկը առաջին եռամսյակի կտրվածքով 300.0 /երեք հարյուր հազար/ դրամի դիմաց, հավաքագրվել է՝ 98.3 /իննսունութ հազար երեք հարյուր/ դրամ, կատարման տոկոսը կազմում է՝ 32.7:

Գույքահարկ շենք շինությունների համար նախատեսված՝ 20.0 /քսան հազար/ դրամի դիմաց, կատարվել է հավաքագրում 1.7 /մեկ հազար յոթ հարյուր/ դրամ, կատարման տոկոսը կազմում է՝ 8.6:

Փոխադրամիջոց գույքահարկի համար՝ 300.0 /երեք հարյուր հազար/ դրամի դիմաց, հավաքագրվել է՝ 193.0 /մեկ հարյուր իննսուներեք հազար/ դրամ, կատարման տոկոսը կազմում է՝ 64.3:

Տեղական տուրքերի համար՝ 7.0 /յոթ հազար/ դրամի դիմաց, հավաքագրում չի կատարվել:

Վարձակալական հողերի համար՝ 35.0 /երեսուն հինգ հազար/ դրամի դիմաց, հավաքագրվել է՝ 0.5 /հինգ հարյուր/ դրամ կատարման տոկոսը կազմում է՝ 1.4:

Աղբահանության համար՝ 25.0 /քսանհինգ հազար/ դրամի դիմաց, հավաքագրվել է՝ 38.6 /երեսունութ հազար վեց հարյուր/ դրամ, կատարման տոկոսը կազմում է՝ 154.4:

Առաջին եռամսյակում ցածր հավաքագրումը պայմանավորված է նրանով, որ գյուղում դեռ չի հասունացել բերքը և գյուղացին դեռևս իր արտադրանքը չի վաճառում:

Քաղաքացիների տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում իրականացվել է համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունները:

Առաջին եռամսյակի ընթացքում ընդունելության եկած բնակիչները դիմել են `բազմաբնույթ հարցերով, որոնց մի մասը բավարարվել է, մի մասն էլ կատարման փուլում է:

Հողօգտագործման բնագավառում՝

Իրականացվել է վերահսկողություն համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման և հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ:

Կատարվել է նաև հողաչափական աշխատանքներ, բնակիչների դիմումների հիման վրա:

Կազմակերպվել է Մարտի 8-ի տոնակատարությունը, որի ժամանակ համայնքի կենսաթոշակականանց, դպրոցի ուսուցչուհիներին, բուժ. աշխատողներին և համայնքապետարանի կին աշխատողներին, բաժանվել է արժեքավոր նվերներ 504 000 /հինգ հարյուր չորս հազար/ դրամ արժողությամբ:

Կրթության և մշակույթի բնագավառում՝

Իմ կողմից մշտական ուշադրության է արժանանում գյուղի միջնակարգ դպրոցը:Գյուղի դպրոցում իրականցվող միջոցառումները արժանանում է համայնքապետարանի աջակցությանը:

Կնքվել է պայմանագիր Հ.Տ. Զ. Հ.-ի հետ, դպրոցի մարզադահլիճի կառուցման ծրագիրը իրականացնելու համար:Այդ առումով համայնքապետարանը՝ ըստ պայմանագրի կտրամադրի ծրագրի արժեքի 7 տոկոսի չափով ներդրում:

Համայնքի երեխաների առօրեան հետաքրքիր դարձնելու համար,կնքվել է պայմանագիր պարուսույցի հետ, համայնքում պարի խմբակներ ձևավորելու և իրականացնելու նպատակով:

Անասնապահության բնագավառում՝

Անասնապահներին՝ անասնաբուժական ծառայություն մատուցելու համար, ավագանու որոշմամբ բյուջեից հատկացվել է գումար, անասնաբույժի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու համար:

Սահմանված կարգով վիճ. վարչություն և մարզպետարան է ներկայացվել համապատասխան հաշվետվություններ կատարված՝ ցանքսերի, գարնանացանի, ինչպես նաև համայնքում առկա անասնագլխաքանակի վերաբերյալ:

Սահմանված կարգով համայնքում իրականացվում է ստուգումներ առևտրի կետերում, եռամսյակը մեկ անգամ:Ստուգումների արդյունքները ներկայացվել է՝ մարզպետարան:

Այսքանը առաջին եռամսյակի ընթացքում, բյուջեի կատարման ընթացքի մասին:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«3» մայիսի 2018թվական թիվ 19-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏՇԱՃ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ, ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՐՑԸ՝ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆ՝ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 50-ի երկրորդ մասի 3-րդ կետով, Արմավիրի մարզպետի 16 հունվարի 2017թվականի թիվ 01/03.2/107-17 գրությունը և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Կնքել պայմանագիր՝ Մրգաստան համայնքի անասնաբույժ Վասիլ Վազգենի Հովսեփյանի հետ, համայնքում անասնաբուժական ծառայություններ մատուցելու համար:

2.Հատկացնել՝ 240.0 /երկու հարյուր քառասուն հազար/ դրամ, որպես պայմանագրի գին նշված ծառայությունները պատշաճ մակարդակով կազմակերպելու համար:

3.Համայնքի ղեկավար՝ /Ռ. Խաչատրյանին/ իրականացնել սույն որոշումից բխող իրավական գործառույթները:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ | 5կողմ | 0դեմ | 0 ձեռնպահ |
|---|---|---|---|
| Հ. Եղիգարյան | | | |
| Թ. Զանգիրյան | | | |
| Հ. Ասատրյան | | | |
| Ա. Ասատրյան | | | |
| Ա. Հովակիմյան | | | |

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվականի մայիսի 3
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

# ՈՐՈՇՈՒՄ

«3» մայիսի 2018թվական թիվ 20

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄՈ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ-ՈՒՄ, «ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ» ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ՝ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդվածի 46-ի երկրորդ մասի 1-ին կետով, հոդված 18-ի առաջին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հատկացնել՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ, Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի Կամո Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի ավարտական դասարանի դասղեկ՝ Անժելիկա Աբրահամյանին «Վերջին զանգին» նվիրված միջոցառում կազմակերպելու համար:
2.Համայնքի ղեկավար՝ /Ռ. Խաչատրյանին/ իրականացնել սույն որոշումից բխող իրավական գործառույթները:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 5կողմ Օդեմ 0 ձեռնպահ

Հ. Եղիգարյան
Թ. Զանգիրյան
Հ. Ասատրյան
Ս. Ասատրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվականի մայիսի 3
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

## ՈՐՈՇՈՒՄ

«3» մայիսի 2018թվական թիվ 21

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ «ՄԱՅԻՍԻ 28-Ի» ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ՝ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հատկացնել՝ 400 000 /չորս հարյուր հազար/ դրամ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքում «Մայիսի 28-ի» Հանրապետության տոնին նվիրված միջոցառում կազմակերպելու համար:
2.Համայնքի ղեկավար՝ /Ռ. Խաչատրյանին/ իրականացնել սույն որոշումից բխող իրավական գործառույթները:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 5կողմ 0դեմ 0 ձեռնպահ

Հ. Եղիազարյան
Թ. Զանգիրյան
Հ. Ասատրյան
Ա. Ասատրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվականի մայիսի 3
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան,Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«3» մայիսի 2018թվական թիվ 22

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 18-ի առաջին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Կարապետ Լևոնի Լևոնյանին հոր մահվան կապակցությամբ հատկացնել՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ:
2.Հովհաննես Վարազդատի Ավետիսյանին հոր մահվան կապակցությամբ հատկացնել՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ | 5կողմ | 0դեմ | 0 ձեռնպահ |
|---|---|---|---|
| Հ. Եղիզարյան | | | |
| Թ. Զանգիրյան | | | |
| Հ. Ասատրյան | | | |
| Ա. Ասատրյան | | | |
| Ա. Հովակիմյան | | | |

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական մայիսի 3
գ.Մրգաստան